

Original



ՀԱՅ

ՍԿԱՈՒՏ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Հ. Մ. Ը. Մ.

Հարիւ-Խմբագիր ԿԱՐՍ Պ. ՈՒՇԱԳՆԻՃԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 2 ՀԱՏԸ 5 ԳԷԿԸ 15 ՅՈՒՆԻՍ 1921

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏ
 ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏ
 H A I S C O U T
 ORGAN DES SCOUTS ARMENIEN
 ADRESSE.—Khorassandjian Han, 26, Sirakdji—CONS/PLE
 Բաժնեգին Տարեկան 120 դր.
 Արտասահման 15 ֆր.
 Անդրկա 1.50 տոլար



Հայ Սկաուտները Գայիշ Տաղրի արշաւի նամրուն՝ Շէյթան Քէօփրիւի վրայ նկարուած 29 Մայիս 1921ին

Թոյ առիչ ե-խաւարդներ եւ պատանիներ իրենց բանկազին առողջութիւնը եւ բարոյականը սկսեցան զիջ միջապարտու եւ մթնոլորտի մէջ, սկաուտները բնութեան մահաւ գաւակներն են, առողջ կեանք կը խալտայ անոնց կուրծքներուն մէջ եւ բարոյականը կ'ամրանայ անոնց հոգիներուն մէջ օր օր:

ԳՐՁԻՆ ԽՕՄԲԸ

«Սկառուար եղբայր է ամէն ուրիշ սկառուարի...»

Ամենազեղեցիկ խօսքերը եւ դաւանաբաները՝ անարդիւնք կը մնան երբ խօսքին չընկերանար գործը: Ամէն պատանի կրնայ իր մօտի սկառուար ընկերներուն հետ բարեկամութիւն հաստատել, անոնց հետ խաղալ, արշաւի երթալ, նկար եւ ուրիշ նուէրներ փոխանակել, սակայն ասով շատ սահմանափակ գործ մը ըրած կ'ըլլայ. այսչափով կարելի չէ արդարացնել վերի դաւանանքը պէտք է լայն սահմաններով գործել, պէտք է թղթակցական յարաբերութեան մտնել բոլոր աշխարհի ազգերու սկառուարներուն հետ: Այս թղթակցութիւններու օգուտը ձեր ենթադրածէն շատ աւելի մեծ է: Մի գարմանաբ երբ ըսեմ որ ձեր եւ ձեր հայրենիքի նակատագրին եւ ապագային հետ սերտ կապ ունին այդ կարծուկ, երկտող նամակները:

Ասով դուք աշխարհի ամէն կողմը բարեկամներ կ'ունենաք, որոնք ձեր վրայ կը մտածեն եւ կ'աշխատին ձեզ ո եւ է բանով մը օգտակար ըլլալ: Ձեզի տեղեկութիւններ կուտան իրենց երկրէն, իրենց բաղաբէն, իրենց բարեկամներէն, իրենց ընտանեկան սովորութիւններէն, վերջապէս իրենց արշաւներէն եւ բանակումներէն (campement)՝ նկարներ կը փոխանակեն ձեզ հետ: Դուք իրենց բարբերուն, սովորութիւններուն կը ծանօթանաք փոխադարձ ձեր բարբերը եւ սովորութիւնները ծանօթացնելով անոնց:

Անոնք ձեր նամակները պիտի կարդան իրենց ծնողքին, բարեկամներուն եւ ծանօթներուն, որոնք իրենց կարգին համակրանք պիտի զգան ձեզի, եւ ձեզմով՝ ձեր ազգին հանդէպ: Այդ նամակներու եւ նուէրներու փոխանակութիւններով դուք ուղղակի կամ անուղղակի կերպով ձեր նկարագրին թերիները պիտի շրտկէք եւ լաւ կողմերը պիտի ուժովցնէք. ընկերական եւ ընտանեկան զեղեցիկ սովորութիւններ պիտի ընդօրինակէք, Ձեր ոնք պիտի մարտի եւ քաղաքավար պիտի դառնաք: Նորէն ասիկա առիթ պիտի ըլլայ որ դուք օտար լեզու սորովելու ետեւէ ըլլաք: Յաջորդաբար պիտի թուենք այն առաւելութիւնները որոնք՝ ձեռք պիտի բերէք Ձեր թղթակցութիւններու ընթացքին:

Միայն կ'ուզեմ թելադրութիւն մը ընել ձեզ այս առթիւ: Ձեր նամակները պէտք է ըլլան պարզ, մերթ ոճով (չափազանցուած ածականները (սնայեցէք) ֆաղափար, գուտք (լալկանութիւնը կը խրտեցնէ մանաւանդ ազատ ազգերու անհասունքը): Երբ կը գրէք ձեր կեանքի մասին, անոր լաւ եւ ոգեւորիչ գրուածները գրեցէք, իսկ տխուր գրուածները քաղաքավար ոճով մը արտայայտեցէք: Հայկական գուշումներու մասին վրէժխնդիւր ոճով մի արտայայտուիք. եթէ պէտք ըլլայ նկարագրել զանոնք, պարզ եւ մաքուր ոճով մը գրեցէք՝ առանց չափազանցուած եւ վրէժխնդրական ձեւերու: Եթէ պիտի խօսիք չար անձի մը կամ անձերու մասին՝ տգեղ ածականներ մի գործածէք, որոնք փոխանակ այդ չարը դատապարտելու, ձեզ կը վարկաբեկեն: Ջղուճ՝ սակայն մաքուր ոճով գրեցիք ձեր տողերը:



**ՃԷՄՊՕՐԻԻՆ ԱՌԹԻԻ
ԱՒԱԳ ՊԵՏԸ ԿԸ ՊԱՏՄԷ ՊՕՅ-ՍԿԱՌՈՒՏՆԵՐՈՒ
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը**

(Շար. Թիւ 1 հԳ)

Իճեալ. — Իբր բարձրագոյն խաչալ՝ պատիւը առաջարկուեցաւ երիտասարդներուն: Սկառուտական օրէնքը, որ հիմն է ամբողջ ձեռնարկին, ասպետութեան օրինագիրքէն առնուեցաւ:

Վարչութիւնը կարելի եղածին չափ ապակեզրոնացուցուեցաւ, որովհետեւ տեսած էի որ շատ մը ուրիշ ձեռնարկներ կազմալուծուած էին՝ ծայրայեղ կեղծոնացումի մը պատճառաւ:

Կազմակերպութիւն. — Որպէս զի խմբակեղ անձնապէս կարենայ ճանչնալ իր Սկառուտներուն ամէն մէկը և այսպէսով նախանձախնդիր ըլլայ իւրաքանչիւրին նկարագրիլ զարդացունելու, յանձնարարուեցաւ սակաւաթիւ Սկառուտներէ բաղկացած խումբեր կազմել, կը կարծենք թէ 40ը առաւելագոյն թիւն է:

Խմբակներու գրութիւնը որդեգրուեցաւ,



Սկաուտական արշաւ դէպի Գոյոջ Տաղը 1921 Մայիսին

ինչպէս ոստիկանական մարմնոյն մէջ, և նոյն պատճառներով: Պեճներու ընդարձակ դրութիւն մը հաստատուեցաւ, ինչպէս ծովային զինուորներուն և ոստիկանական մարմնոյն մէջ, ծրագրին այս կամ այն մասին մէջ ցոյց տրուած դերազանցութեան ի նշան:

Չեռնարկին նպատակը աղէկ քաղաքացիներ հասցունել ըլլալով, զինուորական պատրաստութիւնը աւելորդ համարուեցաւ:

Սկաուտական գիտութեան միջոցաւ, ամէնէն անզգայ սինլքորն անգամ կրնայ ազնուանայ և դարձի դայ: Սկաուտական օրէնքը, որուն լրացուցիչ մասը կը կազմէ ամէն օր բարի գործ մը կատարելու պարտականութիւնը, կերպով մը հիմն է մեր վարքին՝ հանդէպ Աստուծոյ և մեր նմանին, հիմ՝ որուն վրայ կրնայ դիւրաւ ձեւուիլ ու է կրօնական հաւատալիք:

Չեմ կարծեր որ այս արդիւնքը կարենայ ձեռք բերուիլ պարզ բանաձեւի մը միջոցաւ: Արդէն, ձեռնարկին գաղտնիքը, հուսկ հետեւութեամբ, Եղբայրակցութեան ոգիին մէջ է:

«Կրնաք մանչու մը cow-boyի, զինուորի կամ նաւագի մը հազուատ հագցնել, կրնաք զայն մարդի այնչափ որ պատկերի մը մէջ երեւցածին շափ շիփ երեւայ, — Ասկէ անպատճառ չի հետեւիր որ, երբ վրայի մասը քերթէք, — Իրաւցընէ դիւցազն մը կամ սուրբ մը ըլլայ:»

Արդիւնքը ներքին ոգիէն և ոչ՝ արտաքին

խաւէն կախում ունի: Արդ, այդ ոգին կա՛յ ամէն տղու մէջ. խնդիրը գտնելուն և երեւան բերելուն վրայ է:

Մեր կարգապահական միջոցն է այն խոսուումը զոր Սկաուտը կ'ընէ իր պատուոյն վրայ, կարողութեանը ներած չափովը յարգելու ակառօժի օրէնքը, 100ին 99 պարագաներու մէջ ընտիր արդիւնք կուտայ:

Սկաուտական շարժումը սունկերէն աւելի շուտ ծաւալեցաւ: Միացեալ Թագաւորութեան մէջ ամէն տեղ Սկաուտութեան ախար արմատ բռնեց և քիչ առնէն գաղութներուն մէջ ալ մտաւ: Հայրենասէրներ ումանք, իրենց հայրենիքին բարօրութեան և բարգաւաճման նախանձախնդիր, կ'ըսէին. «Արդե՛ք կարելի չէ՞ քաղաքի ենթարկել Սկաուտութիւնը, որպէս զի մրցակից ազգ մը զայն չի յափշտակէ. — Հոգ մի՛ ընէք, կը պատասխանուէր անոնց Սկաուտութիւնը զուտ Անգղիական դրօշ կը կրէ և այս պատճառաւ հաճելի չի կրնար ըլլալ օտարականներուն:»

Սխալ: Այսօր ամբողջ աշխարհի մէջ մարգուտը 750,000 Սկաուտներէն հազիւ 250,000ը Անգղիացի են: Եւ ինչ որ հետաքրքրաշարժ է՝ սա է թէ Սկաուտութիւնը ինքնիրենը տարածուեցաւ:

Edward Թագաւորը առաջիններէն եղաւ հասկցող թէ այս հետաքրքրաշարժ ձեռնարկէն

կարելի էր օգուտ մը քաղել: Իր մահէն երկու օր առաջ կը պատրաստուէր Սքառուները աչքէ անցնելու: Զօրճ թագաւորը մէկ քանի ամիս վերջը այս մտադրութիւնը գործադրութեան դրաւ, երբ 30.000ի չափ Սկառուներ-այսքան բազմաթիւ աղայոց ժողով տեսնուած չէր հրքեր-ծափահարեցին Նորին Վեհափառութիւնը Windsor բառքին մէջ 1911 Յուլիս 4ի յիշատակելի օրը:

1912ին, «Մասնաւոր Խորհուրդ»ը քննեց Սկառուական ձեռնարկին նպատակները և մեթոտները, և incorporationի արքայական հրովարտակ մը իրեն շնորհուեցաւ հաստատող թէ ձեռնարկը պաշտօնապէս ճանչցուած էր:

1914ի պատերազմին, հազարաւոր Սկառուներ՝ իրենց սայլերով և վրաններով, ծովային Սկառուներ՝ իրենց նաւերով և կազմածով պատրաստ էին ճամբայ ելնելու, փոքրաթիւ միութիւններով, դէպի իրենց բանակաւորները, օգոստոսի արձակուրդին առթիւ: Հեռագիրը եկաւ յանկարծական փոփոխութիւն մը մտցուց անոնց արշաւներու նպատակին մէջ. ամբողջ երկրին մէջ Սկառուները շարժման մէջ դրուեցան Ոստիկանութեան Տնօրէնին հրամաններուն ներքեւ և պաշտօն ստացան պաշտպանելու երկաթուղիի կամուրջներ, հեռաձայնի և հեռագրի թելեր և չին:

Միեւնորս առեւտրականութիւնը սպասարկութեան կոչուած եզրապահներուն տեղ դրուեցան՝ եզերքներու հսկողութեան համար, ծովային Սկառուներ՝ որոնք Մովակալին հրամաններուն ներքեւ, այս պաշտօնին վրայ մնացին մինչև պատերազմին վերջը: 23,000ի չափ երիտասարդներ փոխնի փոխ կատարեցին այս պաշտօնը:

100,000է աւելի հին Սկառուներ և խմբապետներ Նորին Վեհափառութեան ծառայութեան մէջ մտան և արիարար կատարեցին իրենց պարտականութիւնը: Կրնայ ըլլայ որ անոնք ուրիշներէ աւելի բազաւոր եղած ըլլան, բայց պէտք է ընդունիլ թէ անոնք մասնաւոր գովեստներու և պատիւներու արժանացան: Այս կտրիճներէն 10,000ը իրենց կեանքը նուիրեցին իրենց հայրենիքին:

Պատերազմին սկիզբը, երկու միլիոն Անգլիացի կամաւոր արձանագրուեցան: Մէկ միլիոն Անգլիացիներ չկարողացան զինուորագրուիլ՝ զլիւսաւորաբար այն պատճառաւ որ ֆիզիքական թերութիւններ ունէին, որոնց առաջը կրկար առնուած ըլլայ:

Հինգ միլիոն Անգլիացիներ ալ ձեռնպահ մնացին:

«Առաջնակարգ կայսրութիւն մը կարելի չէ կանգուն պահել երրորդ կարգի մարդոց միջոցաւ», ըսած է Լորտ Ճօրճ, և թէպէտ մարմնական առողջութեան կ'ակնարկէր ան, սակայն 'տքի առողջութեան համար ալ ճիշդ է այս խօսքը:

(Շարունակելի)

ՊԵՏՏՐՆ ԲԱՌԵԼԻ
բարգմ. Յ. Թ. Է.

Վերսիակ.— Նովտորդ գրութեան տպագրութեան մէջ մէկ քանի սխալներ սարգած են. Սկզբնաւորութեանը մէջ, 7րդ տող, «հրամանագրուած»ը պէտք է կարդալ «հրամանագումի» 26րդ տող, Mafe Hingը պէտք է կարդալ Mafeking. էջ 4, Բ. սիւնակ, 7րդ տող Johnը պէտք է կարդալ John. 40րդ տող, «երկրախորշ»ը կարդալ «երկրախորջ» Ե. Թ. Է.

ՍԿԱՌՈՒՏ ՊԵՏ ՊԵՏՐՆ ԲԱՌԵԼԻ ԽՕՄՔԵՐԸ
Ս Կ Ա Ռ Ի Տ Ն Ե Ր Ո Ւ Ն

Անցած ձեւարկի առթիւ գրուած

Ամէն սկստու, որ ներկայ պիտի ըլլայ ձեւարկի խաղերուն, թող յիշէ որ ինքն ալ մաս առնող մըն է այդ հանդէսներուն մէջ և ոչ թէ դիտող, որովհետեւ հանդիսատեսները զինքը պիտի դիտեն և իր վարմունքէն ու ըրածներէն պիտի դատեն բոլոր սկստուները, որով պարտականութեան գլուխ գտնուող դերակատար մըն է ու է սկստու որ ներկայ պիտի ըլլայ հոն:

Դիտենք թէ մեզմէ կ'ակնկալեն որ շնորհալի, մաքուր և աշխոյժ տղաքներ ըլլանք, պատրաստ ամէն գործի: Լաւ, դուռն և շատերը կրնան գոհացում տալ այս պահանջներուն, բայց կան այն բացառիկ տկարները որոնք չեն կրնար սոյն պահանջները գոհացնել և հաւանաբար անոնցմէ մէկն է որ ուշադրութիւնը պիտի գրաւէ ներկաներէն մէկուն և պատճառ պիտի ըլլայ ձեր ամէնուն վարկաբեկումին: Տե՛ս, ան կը սլքտայ աղտոտ, թափթփած հագուստներով, խնձոր մը խածնելով, նարինջ մը ծծելով կամ ծամոց ծամելով, գաւազանը աջէն ձախէն շուրջիներուն դարնելով են, դիտողը պիտի ըսէ, ա՛հ սկառուները բան մը չեն արժեր, ամէնքն ալ անկիրթ տղաքներ են: Այս



Մենք այս տեսակ սկառւտ չենք ուզեր

պարագային, ձեր պարտականութիւնը պատրաստ ըլլալ չէ միայն, այլև մեր անունին արատ բերող ապիկար ընկեր մը տեսնել և կարգի բերել զայն:

Կրկին մի մոռնաք թէ ասկառւտը քաղաքավար է: Կարիւրներով օտարներ պիտի ըլլան հոն. եթէ դուք պզտիկ ծառայութիւն մը ընէք անոնց, շատ մը գրուած գիրքերէ աւելի ազդեցիկ ապացոյց մը տուած պիտի ըլլաք թէ ասկառւտը ազնիւ է:

Արդ միշտ պատրաստ եղէք ամէն ատեն ժողովուրդին ծառայութիւն մը ընելու, մասնաւորապէս օտար սկառւտներուն, զանոնք տեսած ատեննիր միայն երեսնին մի նայիք, այլ բովերնին գացէք, հետերնին խօսեցէք, անոնք ձեր սկտուա եղբայրներն են, հետաքրքրուեցէք իրենցմով և անոնք ալ ձեզմով պիտի հետաքրքրուին: Բարեկամ եղէք հետերնին և եթէ կրնաք՝ հասցէնին առէք որպէսզի կարող ըլլաք թղթակցութեամբ ապագայ բարեկամութեան շարունակական կապ մը հաստատել իրենց հետ:

ՊԵՏԸՆ ԲԱՌՈՒՐԷԼ



ՆՏԱՌԻՏԵՆԵՐՈՒՆ

Բ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉ ՊԵՏԻ Է ԸՆՆԵԼ ԱՌԱՋԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹԻՆ

Առաջին սկառւտական հաւաքոյթին, խումբապետը պէտք է հետեւի որոշ ծրագրի: Այդ ծրագիրը կրնայ կազմուած ըլլալ հետեւեալներէն: Ա. Մարզական խաղեր, Բ. Սկառւտական ծանօթութիւններ, Գ. Չուանի կտորով վարժութիւններ, Դ. Չուարձայի խաղեր, և Ե. Խնդիր կոչը:

Այժմ օրինակներով բացատրենք սոյն ծրագրին մէն մի թիւը:

Ա. ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ. — Սոյն խաղերը նպատակ ունին զանազան ձեւերով մարզել սկառւտներու ճկունութիւնը, ոյժը, համբերութիւնը, խորամանկութիւնը և միտքը: Սկառւտական կանոնաւոր մարզանքներ դուրս են անոնցմէ որովհետև ատոնք աւելի խաղ են քան թէ մարզանք: Հետեւեալ խաղերը կարելի է դասել այս կարգին. արշաւի խաղը, զի՞ր քի պատկեր, զաւազակով վերցնել եւ ախրաւաւորը:

ԱՐՇԱԽԻ ԽԱՂԸ. — Սոյն խաղը շատերու ծանօթ խաղ մըն է: Սկառւտները շրջանակաձև կը շարուին: Ամէն ոք իր աջ ձեռքը՝ փքր դէպի վեր դարձած կոնակը կը տանի: Սկառւտներէն մին ձեռքը պլորուած թաշկինակ մը բռնած կ'սկսի դառնալ կազմուած բոլորակին շուրջ, և թաշկինակը կը դնէ բաց ձեռքերէն միոյն մէջ: Թաշկինակը անոնողը պէտք է հալածէ միւսը մինչև որ ան պարապ մնացած տեղը գրաւէ, եւ այսպէս կը շարունակուի:

ԳԻՐԻ ԹԷ ՊԱՏԿԵՐ. — Գիտինք ուղիղ գիծ մը կը քաշուի և հաւասար թիւով սկառւտներ գրծին աջ և ձախ կողմերը կը շարուին իրարու ետև: Խաղին վարիչը ձեռքը դրամ մը բռնած վեր կը նետէ: Դրամը վար ինչալուսն արդիւնքը բարձրաձայն կը յայտարարէ, գիր կամ պատկեր: Այս կերպով եթէ գիր է, գծին աջ կողմը գանձուողները ձախ կողմինները կը հալածեն իսկ

եթէ պատկեր փոխադարձաբար: Հայածուժը կը շարունակուի մինչև քանի մը քայլ հետո. գանուող որոշ սահման մը և եթէ այդ միջոցին ունէ մէկը բռնուի, կ'անցնի հակառակ կողմի շարքին մէջ: Որոշ ժամանակ մը վերջ, որ կողմը որ շատ անդամներ ունի, կը շահի:


ԳԱՒԱԶԱՆՈՎ ՎԵՐՅՆԵՆ. — Երկու հոգի դէմ դիմաց կը նստին օտքերնուն ծայրերը իրար դպցոցած և ծունկերնին դէպի վեր ծալած: Երկուքն ալ հորիզոնական գաւազան մը կը բռնեն իրենց ձեռքերով և արուած շշանին վրայ կ'սկօին քաշել, ջանալով իրենց դիմացինը գետնէն վեր վերցնել սաքերուն վրայ:

ԱՔԼՈՐԱՄԱՐՏ. — Երկու հոգի վերոյիշեալ դիրքով դէմ դիմաց կը նստին: Իւրաքանչիւր տղայ ծունկերուն տակի կողմը գաւազան մը կը դնէ, և ձեռքերը ծունկերուն քովէն գաւազանին տակէն անցնելով կ'ամրացնէ ծունկերուն առջևը: Յետոյ իւրաքանչիւր տղայ կը ջանայ իր օտքերուն ծայրերով դիմացինին օտքերը գետնէն վեր հանել, այն որ կ'անակի վրայ գետին գլորի, յաղթուած կը նկատուի:

*** ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ.** — Ընդունելով որ բոլորովին նոր սկսուածական շարք մը պիտի կազմուի, առաջին հաւաքոյթին սկսուած խմբագիտը պարտի բացատրել համառօտ կերպով նախ սկսուածութեան ծագումը և ծանօթացնել հիմնադիրը, նպատակը, գործունէութեան միջոցները և արձանագրութեան պայմանները: Սկսուածին դաւանանքն ալ մէկ երկու խօսքով բացատրել վերջ կը կատարէ արձանագրութիւնները: Իսկ յաջորդ դասախօսութիւնները պէտք է որ ըլլան մասնաւոր շրջաքի առաջնորդութեամբ՝ կանոնաւոր դասախօսութիւններ: Այս ծրագրին մաս պէտք է կազմեն, սկսուածին երդումը, դասակարգը՝ ընդարձակ կերպով վերլուծուած, զուգակներու դործածութիւնը և պատասխաններ, հետախուզական նշաններ և հետքեր, կարմիր խաչի ծանօթութիւններ, բուսաբանական, կենդանաբանական, երկրաբանական և սասնադիւրսական ծանօթութիւններ, աշխատանքու ծրագրում: Զանալու է կարելի եղածին չափ զանազանութիւն դնել դասախօսութեանց մէջ ձանձրացուցիչ չի դարձընելու համար զանոնք և մանաւանդ տեսակա՛նէն աւելի գործնականին ոյժ տալու է:

*** ԶՈՒՍՆՈՎ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ.** — Սկսուածական գիտելիքներու մէջ կարելի տեղ մը կը գրաւեն կապերու գործածութիւնը: Սոյն կապերը պէտք է խմբագիտը մաս մաս ցոյց տայ սկսուածներուն, որպէսզի անոնց միտքը չի խճողուի:


Ահաւասիկ անոնցմէ քանի մը հատ: Վիրաբուժական կապ (պատ. 1). Սոյն կապը կը գործածուի վիրակապերու երկու ծայրերը ամրացնելու:



Պատ. Թիւ 1



Պատ. Թիւ 2



Պատ. Թիւ 4



Պատ. Թիւ 3



Պատ. Թիւ 5



Պատ. Թիւ 6

Անկողի կապ (պատ. 2). — Կը ծառայէ չուանին ծայրը հաստատուն օղակ մը շինելու: Սահմակ կապ (պատ. 3). — Կը գործածուի չուանին ծայրը սահող օղակ մը շինելու:


Անկողի կապ Ա. (պատ. 4). — Երկար չուանները առանց կտրելու կարճեցնելու կը ծառայէ: Գործածութիւնը կարելի է վրաններու կանգնումի տեղն:

Գերակ կապ Ա. (պատ. 5). — Գերանի մը չուան մը հաստատուելու համար:


Բ. (պատ. 6). — Կոճղ մը չուանով քաշել տանելու համար:

(Ետ.)

Բ. ՎՅՏՈՒՆԻ



ԻՌԻՄԱԿ ԴՐՕՇԱԿ Տես «Հայ Սկսուած» Թիւ 1, էջ 12



ՈՒՍՆՈՑ Տես «Հայ Սկսուած» Թիւ 1, էջ 12



ԳՈՂԸ

(Սկառուակի մի կետնիկ)

Ինչո՞ւ կարեւոր բան մը պատահած էր: Սկառու առաջնորդներէս մին, Անթովիօ, ներդուլիւն ինդրելով, առաջարկեց ընթրիքէն առաջ պոյոյս մը ընել: Եղջարեցի թէ նա չափազանց յուզուած էր ու պատճառն ալ խիստ կարեւոր էր: Առանց վարանելու, թեւը մտայ ու ըսի. «Սո՛ւ, ուրեմն, եկուր երթանք»:

— «Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ, Անթովիօս,» հարցուցի: Նա վայրկեան մը լուռ մնալէ վերջ գորդոջուն ձայնով մը պատասխանեց.

— Կը վախճամ թէ գող մը կայ խմբակիս մէջ:

Անպատճառ կարեւոր բան մը պատահած էր, լաւ կը ճանչնայի Անտովիօն, նա առանց փաստերու կարող չէր անբաստանել: Վայրկեան մը լուռ մնալէ վերջ կարմանքով հարցուցի եւ ըսի.

— Իրապէս անթ ի՞, բայց կը կարծեմ թէ գուցէ կը չափազանցես, այլպէս չէ՞:

— Ոչ, բայց ես ալ չեմ գիտեր թէ ինչպէս եղած է: Ո՞վ է ուրեմն գողը հարցուցի ցած ձայնով:

Անթովիօի ձայնը հետզհետէ կը տկարանար, նշան բեցի թէ նա կը ջանար չըլլալ: Հարիւր լսելի ձայնով մը ըսաւ.

— Բիէրիօն է:

Բոլորովին այլայլած բացազանչեցի «Անթովիօ, ի՞նչ կ'ըսես. Բիէրիօն է, լաւագոյն և ազնիւ սկառուալ, քու հին ու ամենասիրելի ընկերը և դուք զայն կ'ամբաստանես իր գող, ուրեմն պէտք է ճշմարտութիւնը հասկընար: Եւ Անթովիօ հետեւեալ կերպով պատմեց կողոպտութիւնը:

— Ի՞նչ դպրած էինք լոգանք առնելու համար, Բիէրիօ, Նէլլօ և ես մինչ, միւս եղբերքը լոգանցիք: Հսն տեսանք մարդ մը որ լծին մէջ բան մը կը փնտռէր: Երբ մեզ տեսաւ կանչեց ու ըսաւ թէ թիւզարած միջոցին, մտաէն խիստ լարեցաւ որ մատանի մը ինկած էր: Խնդրեց որպէսզի փնտաւեմք եթէ գտնենք՝ պանդոկ իրեն տանինք:

— Ուրեմն, հարցուցի

— Ոչ ոք գտաւ, բայց Բիէրիօ... ո՛հ, շատ չար բան է: Բացազանչեց Անթովիօ և սկսաւ դառնօրէն հեծկտալ:

— Ըսէ՛, ուրեմն Անթովիօ, բացատրէ իրողութիւնը, կրկնեցի:

— Մենք բան մը չգտանք, որովհետեւ Բիէրիօն արդէն գտած ու բերանին մէջ պահած էր:

— Անկէ վերջ:

— Մէկուն բան մը չըսաւ, մեզի ալ այնպէս կարծել

տուաւ թէ ինք ալ բան մը գտած չէ: Երբ վրան վերադարձանք, ինձի՛ք արտօնութիւն ուզեց վրանին տակ պառկիլ ու հանգստանալ: Արտօնութիւնը տակ բայց ինձ պարտականութիւն նկատեցի զայն լրտեսել: Եղջարեցի որ նա մտածանին իր ծածկոցին մէջ պահեց: Մինչեւ երեկոյ յուսացի թէ պիտի խոստովանի ինձ— որովհետեւ միշտ այդպէս ըրած էր— բայց համոզուեցայ թէ այս անգամ նա չուզեր արտայայտուիլ: Ի՞ժախտ էի ու շուտրած, ինչ ընելիքս չէի գիտեր:

Անթովիօ, լալով վերջացուց իր պատմութիւնը. Զափազանց յուզուեցայ «Բիէրիօս գող... չէի ուզեր հաստատալ բայց ի՞նչ բացատրութիւն տալ: Արդեօք ներքին յեղաշրջումի մը կամ ընտանեկան թշուառութեան պատճառներու վերագրէի անոր այդ ընթացքը...»

— «Ի՞նչ պիտի ընենք ուրեմն» հարցուց Անթովիօ:

— Մինչեւ վաղը սպասենք պատասխանեցի:

Անթովիօ հնազանդեցաւ որովհետեւ կը սիրէր զիս:

Արշալոյսը նոր սկսած էր: Հարիւր արջիցած լսեցի Անթովիօի ձայնը որ կ'ըսէր ինձ.

— Բիէրիօն մեզած է, չեմ գիտեր թէ ո՞ւր: Բայց զինքը պիտի հետապնդեմ:

Հարիւր քայլ աւարտած Անթովիօ սուբաց վրանէն դուրս: Անմիջապէս վեր կանգնեցայ. խոսակազմով մը տանեալներ զիս կ'զբաղեցնէին: Զէի կրնայ բացատրել, բայց վստահ էի թէ Անթովիօ միշտ սիրով ու խստճով թեմա վարուած էր: Զարմացուած արտասխարհօրէն սաստկացաւ երբ կես ժամ վերջ Անթովիօ վերադարձաւ շնչանդէ ալ յայտնեց թէ Բիէրիօս ինքզինքը արդարու թեան յանձնած էր:

— Ինչ կ'ըսես, Անթովիօս լսի գողոյս լալով, եւ Բիէրիօն անտարբեմա՞ք:

— Նիշ է, ըսաւ ան, առանց Եղջարելու հետեւեցայ անոր: Ենտակ աստիկանաւորաբար գտայ: Տոն տեսաւք թէ աստիկանաւորեան սննեակը հարցալուսութեան ենթարկուեցաւ:

Թողիքը հեռու ետէ կը ծախանար: Արդեօք սննեկալէս երթալ զանեղ աստիկանաւորեան, որ սկառուանցու կատարեալ բարեկամ էր ու տեղեկանալ ինդրի էութեան:

Ոստիկանապետը սիրալիր կեցողով ընդունեց զիս: Բիէրիօի վարկածին մասին հարցուցի ըրի: Ոստիկանապետը զիս մտիկ ընելէ վերջ դարձեցաւ ինձ հարցուց:

— Ուրեմն չէիք գիտեր թէ նա հոս եկած է:

Ոչ երբեք, պատասխանեցի հանգարտութեամբ:

— Կը ցաւիմ որ այժմ չեմ կարող ռելէ յայտնութիւն ընել: Հաճեցէք մի քիչ սպասել հաս, Բիէրիօս քունօրդ ծամ վերջ մեզ անսպասելի եւ հաճելի անակնկալ մը պատճառեմ:

Թարգմ. Ե. DON LEONARDO PEYTON (Շարունակելի)

